մնում է առուակի ձախ կողմը բարձունքի վրայ հիւսիսային կողմում, միանում է Ախզայի առուին, որ ոռոգում է՝ Ուրգուլա, Թէջէէլի, Գիւմիւշ-Խանէ, Գիւսխանէ, Բոսելտ, Շագիրա, Արկի, Կաշուխտի, Արկիմ, Ագարա եւ Կշլա գեղերը, մացրանները եւ Ախզա ամրոցը: Շագիրա առուն ոռոգում է խարխալը (երեւի ժամանակին Խարխալից եկուոր բնակիչներ է ունեցել): Արդանուչի բերդից, աւանի բէդէնից (պարսպից) ջոկ, այլ եւ այլ աւերակ եւ բնակ գեղերում տասից աւելի ամրոցներ կան, որոնք, բոլորն էլ գղեակների եւ ապարանքների աւերակները ներկայացնում են քննող աչքերին:

Կուրդեվան լեռներից բղխում է Զխակաթիխեւի առուակը, որ ուղղակի թափւում է ձախից Շաւշէտի վտակը, ոռոգում է Բարիւ, Կարսիա, Ուստամել, Սոլիանա, Կոնտրում, Գորոշէտ, Վ. Պետրոբան, Սամխար, Ուկին, Ն. Պետրոբան, Գոդատի, Նորգիէլ եւ Խոզաբարտ[1] առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց պարագաներով: Սակալ-Դիդան լ-ից իջնում է Սամի-ծխալի առուակը եւ խառնւում է Շաւշէտի վտակին, որը ոռոգում է Գոբիխոցիա, Անակերտ, Արչիետի, Անչ-Մ.,

---

1 Խոզաբարտայի մօտ մինչեւ օրս կանգնած են տաճարի որմեր, վանքի աւերակներ, որոնք մի ժամանակ զարդարած էին Շաւշէտի ակը: Կան բազմաթիւ ամրոցների, տաճարների եւ վանքերի աւերակներ, գերեզմանոցներ, որոնք միայն անցեալի փլատակն են ցոյց տալիս: